ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-42/21-03/62
«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Մեծամոր

«21» հոկտեմբերի 2021թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանի, որը գործում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու, ինչպես նաև Առաջարկող), մի կողմից, և «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Արման Աբրահամյանը, որը գործում է «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող, ինչպես նաև Կազմակերպիչ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ապրանքանյութական արժեքների աճուրդային եղանակով օտարման ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն (Առաջարկող) իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.3 Կազմակերպչից պահանջել սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

2.1.4. Առաջարկել Կազմակերպչի կողմից ստեղծվող աճուրդային հանձնաժողովի կազմում ընդգրկել իր ներկայացուցչին (ներին):

2.2 Պատվիրատուն (Առաջարկող) պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ապահովել աճուրդի դրված լոտի (լոտերի) մասին լիարժեք և հավաստի տեղեկատվության տրամադրումը Կազմակերպչին:

2.2.3. Աճուրդի մասնակիցներին հնարավորություն ընձեռել նախքան աճուրդի բացումը ծանոթանալ աճուրդի ծանուցման մեջ նշված լոտին (լոտեր)՝ հետևյալ կարգով և ժամկետներում.

- հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ հասցեում նախապես զանգահարելով +374 10 28 29 60 հեռախոսահամարով, յուրաքանչյուր երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 09:00-14:00:

2.3 Կատարողը (Կազմակերպիչը) պարտավոր է՝

2.3.1 Անձամբ կազմակերպել և անցկացնել աճուրդը՝ առաջնորդվելով տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներով:

2.3.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.3.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.3.4. Աճուրդը կազմակերպել և անցկացնել սույն պայմանագրի N 1 հավելված-ում սահմանված ժամկետներում:

2.3.5. Կազմել և Առաջարկողի ցանկությամբ տրամադրել հրապարակման ենթակա աճուրդի մասին հրապարակային ծանուցումը, նախատեսելով, որ այն պետք է հրապարակվի աճուրդի անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ:

2.3.6. Առաջին աճուրդում մասնակից չլինելու դեպքում կազմակերպել ևս 2 /երկու/ նոր աճուրդ:

2.3.7. Աճուրդը կազմակերպել և անցկացնել հետևյալ դրույթով՝

- ցանկում նշված վաճառվող ապրանքների կշռելու և տեղափոխման գործընթացը իրականացնում է Գնորդը ՀԱԷԿ-ի տարածքում՝ իր միջոցներով:

- աճուրդի ավարտից հետո առավելագույնը երկու ամսվա ընթացքում վաճառված գույքը աճուրդում հաղթած մասնակիցը պետք է տեղափոխի ՀԱԷԿ-ի տարածքից:

- լոտի (լոտերի) մեկնարկային գնի ցանկացած փոփոխություն Կատարողը (Կազմակերպիչ) կարող է իրականացնել միայն Պատվիրատուի հանձնարարությամբ:

- աճուրդն անց է կացվում «դասական»՝ գնի ավելացման եղանակով:

2.3.8. Աճուրդի անցկացմանը նախորդող երեք օրվա ընթացքում աճուրդը կազմակերպելուց և անցկացնելուց հրաժարվելու դեպքում հատուցել մասնակիցների կրած իրական վնասը, եթե վնասի առաջացումը կապված է չկայացած աճուրդի հետ և առկա է իր մեղքը:

2.3.9. Աճուրդի արդյունքներն ամփոփելուց հետո յոթօրյա ժամկետում արձանագրությունը ներկայացնել Առաջարկողին:

2.3.10. Չհրապարակել աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2.4. Կատարողը (Կազմակերպիչն) իրավունք ունի՝

2.4.1. Ծանոթանալ աճուրդի ներկայացվող լոտին (լոտեր)՝ անհրաժեշտության դեպքում պահանջելով լրացուցիչ փաստաթղթեր դրանց վերաբերյալ:

2.4.2. Ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց, եթե Առաջարկողը խոչընդոտներ է ստեղծում աճուրդին մասնակցել ցանկացողների համար իր կողմից աճուրդի ներկայացված լոտին (լոտեր) ծանոթանալու հարցում:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը բոլոր լոտերի վաճառքի դեպքում կազմում է **8 150 666 (ութ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար վեց հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն 1358444,33 ՀՀ դրամ**, սակայն վճարման ենթակա է փաստացի վաճառված լոտերի մեկնարկային գնի 0.25 տոկոսը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Կազմակերպիչը աճուրդի ավարտից (աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը, իսկ մեկից ավելի լոտի դեպքում՝ աճուրդի արդյունքների ամփոփ արձանագրությունը Առաջարկողին հանձնելու պահից) ***յոթ աշխատանքային օրվա*** ընթացքում **լոտի (լոտեր) վաճառքից ստացված գումարը** փոխանցում է Առաջարկողի հաշվեհամարին՝ հաշվանցելով Կազմակերպչի մատուցած ծառայության վարձատրության չափը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8. Առաջարկողը պատասխանատվություն է կրում՝

- իր կողմից առաջարկված լոտի (լոտեր) ձեռքբերման հիմքերի օրինականության համար,
- լոտի (լոտեր) և դրա նկարագրի անհամապատասխանության համար,
- ցանկացած պարտքից, ծանրաբեռնվածությունից և երրորդ անձանց իրավունքներից աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) ազատ չլինելու համար:
- սույն պայամանագրի 2.2.3 կետի խախտման և սույն կետում նշված դեպքերում Առաջարկողը պարտավոր է Կազմակերպչին հատուցել վերոնշյալ դեպքերի և խախտումների հետևանքով վերջինիս կրած կամ Կազմակերպչի կողմից երրորդ անձանց հատուցած իրական վնասները:

5.9. Կազմակերպիչը պատասխանատվություն է կրում՝

- «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով նախատեսված աճուրդի կազմակերպման և անցկացման կարգը խախտելու համար,

5.10. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի,

ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Աճուրդի ենթակա ապրանքների ցանկը և սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	**«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ**
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,	0015, ք. Երևան, Զաքիյան 10
Հ/Հ 2470100897920010	**Հ/Հ** 900018002981
Արդշինբանկ ՓԲԸ,	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն,
ՀՎՀՀ 04401874,	**ՀՎՀՀ** 02562123,
Հեռ./ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,	**Հեռ.՝** 010-56-14-21,
Հեռ.՝ 20-04-91, 33-40	**E-mail:** petguyq.poak@mail.ru
E-mail: anpp@anpp.am	
..... **Է. Մարտիրոսյան**	..... **Ա. Աբրահամյան**
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« » 2021թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-42/21-03/62 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	79341240	**«ՀԱԷԿ» ՓԲԸ պահեստային տնտեսության կենտրոնական պահեստներում առկա դանդաղ շարժվող կամ ընդհանրապես չշարժվող ապրանքանյութական արժեքների օտարում»: Ծառայությունը մատուցել Առաջարկողի կողմից տրամադրվող ցանկի համաձայն:**	դրամ	**8150666**	1	Կատարողի կողմից նշված վայր	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից **30 օրացուցային օրվա ընթացքում կազմակերպել 1-ին աճուրդը, չվաճառված ապրանքների մասով կազմակերպել ևս 2 աճուրդ**

Լրացուցիչ պայմաններ՝

1. Վաճառված ապրանքների մեկնարկային գնից վճարման ենթակա գումարը կազմում է 0,25 տոկոս:
2. Աճուրդի մասնակիցը վաճառքի ենթակա ապրանքներին տեղում («ՀԱԷԿ» ՓԲԸ տարածքում) ծանոթանալու համար 3 աշխատանքային օր առաջ պետք է պատվիրատուի ղեկավարին ներկայացնի համապատասխան գրություն և անձը հաստատող փաստաթղթի պատճեն:
3. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործելու է 180 օրացուցային օր կամ 3-րդ աճուրդի ավարտը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Է. Մարտիրոսյան
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ

Ա. Աբրահամյան
Կ.Տ.